10. ԷԼԵՔՍԱՆ ՈՒ ՊԱՌԱՎ

Թագավոր մա կէղնի, ուրին՝ քառսուն տղա։ Թագավորն օր կէղնի մեռնելու, կխանչա տղեքներ, կտանի ուր մոտ, կեսա.— Տղեքնե՛ր, լաո, ինչ ճամբով կէրթաք գացեք, հի՛նա մեկ բարակ ճամբով չէրթաք։

Թագավորն օր կմեռնի, պզտիկ ախպեր էլեքսան կըսի ուր ախպըրտանց.—Քըլեք էրթանք ըդ ճամբու հետ, ըսանք ի՞նչ կա ըդ ճամբու հետ օր մեր պապ կվախեներ։

Կէլնին քառսուն ախպեր, կառնին զիրար ու կէրթան։ Կէրթան ըդ ճամբու հետ, Ավագ ծով կընցնին, կտեսնան օր պառավ մա նստուկ հ՝ոդա, ծծեր թալի էտևանց, գլուխ կսանդրա։ Զէլեքսան օր կտեսնա, կեսա.—Էլեքսա՛ն, բարով էկար, ես զքղիկ ճրագով կգաշենք, անճրագ էկար։

Պառավ կառնի զքառսուն տղեն լա, կէրթա ուր տուն։

Սուֆրե մա կպարզա ուրանց հ՝առեջ, վարոց մա կզարկա վըր սուֆրին, ինչ թաուր եմակ էսիս, կլցվին վըր սուֆրին։ Քառսուն ախպեր լա կուտին, կես չըն էնի։

Իրիկուն օր կէղնի, պառավ քառսուն ախպոր տեղ հ՝ըռեջով կթալա, քառսուն կոճ կդըրա ուրանց գլխուն, սև ջյաջիմ սպիտակ վըր ուր քառսուն աղջիկներուն, ինք կէրթա թավլեն ուր ակռեք կսրա, օր իգա զքառսուն տղեն լա ուտա։

Կես գիշեր օր կէղնի, էլեքսան կէլնի, քառսուն ախպեր կիմըցու։ Ախպըրտանք կիմնան, ամեկ ուր գլխու կոճ կդրա ուր տեխի

մեջ, սև ջյաջիմ կթալա վրը աղջիկներուն, սպիտակ ջյաջիմ կթալա ուրանց տեղի վրեն, ուրանք կէրթան։

Պառավ կիգա զուր քառսուն աղջիկ լա կուտա։ Լուսունպտին կէլնի, սպիտակ ջյաջիմ կվերու, կեսա.—Աղջիկնե՛ր, լաո՛, էլեք ոտ ու գլուխ էնեք լըշիկ խաշ։ Կիրիշկա օր քառսուն կոճի հ՚ոդի, կեսա.—Էլեքսա՛ն, զիմ աղջիկներ լա՞ տվիր վրը ընձիկ դուս։

Ախպրտանք զԱվագ ծով օր կընցնին, կնստին հոդի, մրժուլի կէնին։

Էլեքսան կեսա ախպորտանց.—Ախպրտա՛նք, հանդե մենք կէրթանք իգա քաղքի մեջ, չէղնի թագավորին խսա էնիք, թը՝ պառվուն հրմլա սուֆրե մա կա։

Կէլնին կէրթան քաղքին մեջ, ամեկ ուրանց գործ մա կէնին։ Ճոշ ախպեր կէղնի թագավորուն խազարած։ Ճոշ ախպոր փոր կուռի։ Օր մա չէ օր մա թագավորին կեսա.—Թագավո՛ր ապրած, դու թագավորմ՚ իս, քզիկ սուֆրե մա չիկա, ընա ֆլան պառվուն սուֆրե մա կա, օր բանաս քու ասքըրի հ՚առեջ, ասքըր թաֆ ուտա, կես չէղնի։

Թագավոր կեսա.—Ապա ո՞ր զէդա սուֆրեն կբերե ընձի։

Տղեն կեսա.—Իմ պզտիկ Էլեքսան օր չբերա, մարդ չբերա։

Թագավոր կխանչա զէլեքսան, կրերա ուր մոտ, կեսա.—Գրնա՛, պառվու սուֆրեն բեր ընձիկ։

Էլեքսան կեսա.—Քու սովրցողի աչք քյոռնա։

Էլեքսան կէրթա Ավագ ծով կընցնի, կտեսնա օր պառավ նստեր է գլուխ կսանտրա, պառավ օր կտեսնա զէլեքսան, կեսա.—Էլեքսա՛ն, դու բարով խերով էկար։

Էլեքսան կեսա.—Պառա՛վ, ես շխո քզի ապով իմ իկե։ Քըլե էրթանք մեկ լա ըն սուֆրեն բաց իմ հ՚առեջ, կուշտ ուտիմ ու դու լա զիս կի։

Պառավ կառնի զէլեքսան, կէրթա տուն, սուֆրեն կրանա Էլեքսանի հ՚առեջ։ Ճաղճի քար կիտա դռան հ՚առեջ օր չփախնի, հ՚ինք կէրթա թավլեն, զակռեք կսրա։ Էլեքսանի մատնիկ հըրիշտակ կէղնի, պառավ օր կմտնի թավլեն, Էլեքսան կհանա ուր մատնիկ, դրա վրը սեղնին, ինք կառնի զսուֆրեն ու կէրթա։

Քյանի պառավ կեսա.—Կուտի՛ս։

Մատնիկ կեսա.—Հա՛։

Էլեքսան օր Ավագ ծով կընցնի։ Մատնիկ կեսա.—Պառա՛վ, կերա ու գացի։

Պառավ ֆաշման կուգա, կիրիշկա օր էլեքսան առե սուֆրեն, դացե։

Կէլնի տանիք կիրիշկա, օր էլեքսան ծովն հ'ընցավ։

Կեսա.—Էլեքսան, իմ սուֆրեն լա վըր ընձիկ տվիր դուրս։

Պառավ ուխտ էներ ա, զԱվագ ծովն չընցնի։

Էլեքսան կառնի սուֆրեն, կտանի թագավորին կիտա։ Թագավոր սուֆրեն օր կբանա, ուր ասքյարներ թաֆ կուտին, կես լա չըն էղնի։ Թագավոր կեսա էլեքսանին.—Գնա՛, զպառավ լա բի ընձիկ։

Էլեքսան կեսա.—Թագավո՛ր ապրած, զքու ասկյարներ հ'ըմեն տար, թե կարցար բերիր, նոր՝ ընձի ասա։

Թագավոր կեսա.—Անկարելի՛ ա, յա՛ն կէրթաս կբերիս, յան զքու գլուխ կդարկիմ։

Էլեքսան կեսա ներու մա փոստ բերեք, ամեն մաղեն զանգուլակ մա կախեք, սանդուխ մա լիք մըխ բերեք, չվանմ՝ լա բերեք, նոր կէրթամ զպառավ բերիմ։

Էլեքսան կշալկա զանգուլակ մա, փոստ կթափա ինք ու կէրթա։

Հ'իրիկուն օր կէղնի, կէրթա պառվու հ'էրթիքին չվան կկապա սանդուխ, կիջու պառվու էրթքեն, կեսա.—Պառա՛վ, ես Գաբրել հրեշտակն իմ, էկեր իմ քու հոգին կառնիմ,—փոստ օր կզընգըլցու, պառվու խամ կկոտրի։—էլեքսան կեսա.—շո՛ւտ էնա, անգան ա, զքզի կտանիմ աստծու մոտ, կխանչա։

Պառավ կեսա.—Հիվանդ իմ, չըմ կենա։

Էլեքսան կեսա.—Մտիր սանդուխի մեջ, կքաշիմ կհանիմ։

Պառավ կմտնի սանդուխի մեջ, էլեքսան կքաշա, կհանա սանդուխ մըխ կշարա վըր պառվու կողերուն, կշալկա զպառավ ու կէրթա։ Կէրթա Ավագ ծովու օրթեն, կեսա.—Պառա՛վ, ես էլեքսան իմ, թա՞լիմ զքզիկ Ավագ ծով։

Պառավ կեսա.—էլեքսա՛ն, զիս Ավագ ծով լա հ'ընցուցիր, զաշխարք՝ կուտիմ։

Էլեքսան կտանա զպառավ կգնա թագավորին հ'առեջ, թագավորուն կեսա.—Քու աստված օր կսիրիս սանդուխին բերան չբանաս, հընչ ես ըդա աշխըրքեն էրթամ։

Էլեքսան կէրթա.—Քաղքի մա մոտ կմտնի ճաղաց, քար մա կիտա դռան հ'առեջ ու իրեք օր կմնա. թագավոր սանդուխի բերան կբանա։ Պառավ հ'առջի հաղ զթագավոր կխեղդա ու կինկնի

քաղքի մեջ, մարդ, կնիկ, ճիժ, թամամի կխեղդա, հ՚ըմալ կէնա զքաղաք, օր հավ, ձագ մը չմնար մեջ։

Պառավ կեսա՝ կանի, հ՚առճին հաղ էրթամ զէլէքսան կգտնամ, նոր ընկնիմ աշխար թաֆ ուտիմ։ Կէրթա քաղքի կուշտ, կիրիշկա օր էլեքսան հանդ է ճաղաց ա, կեսա.—էլեքսան, իմա՞լ մտար հոդի։

Կեսա.—Սապոնի, սապոնի ըմ գլուխ ու էկա զարկվա ըդ քար, փըստացի պատա ներս։

Պառավ կէրթա զուր գլուխ կսապոնա, կսապոնա, կզարկա քարի ծըկին, գլուխ կփստա, կընցնի ընդին, ճանդակ կմնա ըդա դին։ էլեքսան թուր կքաշա, թուր մա կզարկա պառվու վզին։

Պառավ կեսա.—էլեքսա՛ն, իրեք կծիկ ու կես հանդէ իմ փորու մեջ, որ զքզիկ լա ուտենք, կէղներ չորս կծիկ։ Հան իրեք կծիկ ու կես տար իրիցա, զուր թող թալ վըր կրակին, տուր թագավորու քթին, թագավոր կսաղնա։ Թ՚էլնի զուր հալ հալվաթ իրիշկա, դարձիր մեկ մէկի քթին ծուխ տուր, հ՚ըմեն կսաղնան։

էլեքսան պառվու փոր կճղա, զիրեք ու կես կծիկ կհանա փորեն, կտանի, կչորցու, կփըշրա, փըշը մը ուր թողեն կըլնա վըր կրակին, կիտա թագավորու քթին։ Թագավոր կժըմըլկըտա, կէլե կնստի։

Կեսա.—էլեքսա՛ն, հ՚ո՞րի չթողիր կուշտ քնենք։

էլեքսան կեսա.—Աստված քու տուն ավրա՛, էլի քու քաղքի հալ-հալվաթ իրիշկա։

Թագավոր կէլնի, կիրիշկա օր սագանին էղնի՝ մարդ չկա։

Կէսա.—էլեքսա՛ն, հ՚ընկի քաղքի մեջ իմ մարդիկ սաղցու, ի՞նչ օր ուզիս, կիտամ։

էլեքսան հ՚ընգնի քաղքի մեջ, զմեն կսաղցու։ Թագավոր, ամեկ ախպոր վրեն աղջիկ մա կպսակա, քառսուն բեռ օսկի կուտա ուրանց, կեսա՝ գացե՛ք։

Ընդոնք կհասնին ուրանց մուրազին, դուք լա՝ ձեր մուրազին։

Իրեք խնձոր իջավ աստծուց. մեկ՝ գրողին, մեկ՝ ըսողին, մեկ լա՝ լսողին։